

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Ավագ դպրոցի անգլերենի ընդհանուր և ընտրությամբ դասընթացների ծրագիր
և գնահատման համակարգ
10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններ

Նպատակը

Ավագ դպրոցում անգլերենի դասավանդումը նպատակաուղղված է սովորողի բանավոր և գրավոր հաղորդակցմանը, միջմշակույթային փոխըմբռնմանը, այլ մշակույթների ու արժեքների ընկալմանն ու գնահատմանը, ոչ հայախոս անձանց հետ շփվելու, այլ երկրների ու ժողովուրդների քաղաքակրթությանն ու մշակույթին հաղորդակցվելու, դրանց լավագույն արժեքները յուրացնելու և հայերենով արտահայտելու, ինչպես նաև հայալեզու մշակույթը այլ ժողովուրդներին մատչելի դարձնելուն:

Խնդիրները

Հաղորդակցական իրազեկության զարգացումը ըստ անգլերենի իմացության համաեվրոպական մակարդակների խոսքային գործունեության 4 ուղղություններով՝ լսելով հասկանալը, խոսելը, կարդալով հասկանալը և գրելը՝ ավագ դպրոցի 10-րդ դասարանի վերջում՝ B1.2, 11-րդ դասարանի վերջում՝ B2.2 մակարդակ:

Մանկավարժական մոտեցումներ

- Օտար լեզվի ուսուցումն իրականացվում է **նախագծային աշակերտակենտրոն** ուսուցման սկզբունքներով:
- Դասավանդող-սովորող, սովորող-սովորող իրավիճակային **խոսությունների ստեղծում, իմաստի որոնում**. (իմաստը չի տրվում պատրաստի ձևավորված վիճակում: Դրան աշակերտը հասնում է որոնելով, կշռադատելով):
- Սովորողներն իրենք են **եզրահանգում** անում, դասավանդողը տալիս է առաջնային գաղափարներ, որից հետո կազմակերպվում են քննարկումներ:
- Հաշվի է առնվում **սովորողի կարծիքը**:
- Լեզվամտածողության զարգացումը կազմակերպելու համար դասավանդողն աշխատում է հետևյալ **համագործակցային և խմբային հետազոտական** մեթոդով:
- Նախագծերի թեմաները համապատասխանում են օտար լեզուների առարկայական ծրագրերի թեմաներին՝ հաշվի առնելով նաև կրթահամալիրի ուսումնական օրացույցի այն կետերը, որոնցով հնարավոր կլինի համալրել ու հարստացնել անգլերենի առարկայական ծրագիրը:

Ուսումնական միջավայր

Նյութական միջավայր

- թափանցիկ, ինքնասպասարկվող, ներառող
- 1-1 պլանշետ/նոթբուք/նեթբուքներով ուսուցմամբ դասարաններ,

Կրթահամալիրի բոլոր կաբինետները, ընթերցասրահները, լաբորատորիաները, արհեստանոց-արվեստանոցները աշխատում են անլար ինտերնետային WIFI ծածկույթով:

Անգլերենի դասավանդման նյութական միջավայր են նաև բակը, դաշտային պայմանները, բնության և պատմության հուշարձանները, թանգարանները, ցուցահանդեսները, ուսումնական ճամբարները, ստեղծագործական հավաքները:

Մեդիա միջավայր

mskh.am կայք, մեդիա գրադարան, TV

Դասավանդողների և սովորողների ուսումնական բլոգներ, մանկավարժական/պատանեկան/մանկական էլեկտրոնային ամսագրեր
Սոցկայքեր՝ Facebook, YouTube

Տանը նույնպես, սովորողը պետք է ունենա համացանցին միացված համակարգիչ, ձայնագրիչ, թվային ֆոտոխցիկ և այլ միջոցներ, որոնք կարող են նպաստել հանձնարարությունն ավելի արդյունավետ կատարելուն:

Օգտագործվող գրականություն

- "English in mind" book 2,3, student's book, Destination B1 և B2 Malcolm Mann, Steve Taylore-Knowles
- First Certificate Passkey , Nick Kenny 1996.
- «English Grammar in Use», Raymond Murphy, Cambridge, third edition
- «Անգլերեն լեզվի գրավոր քննության հարցաշարերի շտեմարան», Լուսակն հրատարակչություն, Երևան 2003
2014թ. լույս տեսած անգլերենի գրավոր քննության հարցաշարերի շտեմարաններ
- <http://www.english-test.net/>
- <http://www.tolearnenglish.com/>
<http://www.usingenglish.com/comprehension/>
- <http://www.englishleap.com/>
- Գրքերի թվային տարբերակներն առկա են գրադարանի կայքում <http://gradaran.mskh.am/sites/default/files/Passkey.pdf>

Ուսումնական աշխատանքի կազմակերպում

Ուսումնական աշխատանքի կազմակերպումը նպատակաուղղված է ուսումնառության դրական դրդապատճառների ձևավորմանը: Դրական դրդապատճառները ձևավորվում են ուսումնական գործունեության հետևյալ ձևերով.

- Կառուցողական մանկավարժության սկզբունքներով կազմակերպվող ուսումնական պարապմունք
- Ուսուցում ըստ նախասիրությունների (ակումբային գործունեություն և ընտրությամբ դասընթացներ) և անհատական ուսումնական պլանների
- Ուսումնական ճամփորդություն
- Մասնակցություն ստեղծագործական հավաքներին և ստուգատեսներին
- Բլոգավարություն
- Էլ.նամակագրություն
- Թարգմանություններ, օտարալեզու հրապարակումներ կայքում
- Ուսումնական այլ նախագծերի իրականացում

Կապը այլ բնագավառների հետ

- Բազմագործառնության իրականացում
Անգլերենի ուսուցումը իրականացվում է այնպես, որ դա լինի և՛ որպես ուսուցման նպատակ, և՛ որպես միջոց՝ գիտելիքների տարբեր բնագավառներից տեղեկություններ քաղելու:

- Միջառարկայական ինտեգրում
Անգլերենը գործածվում է տարբեր ուսումնական առարկաներից ուսումնական նախագծեր իրականացնելիս՝ օտարալեզու աղբյուրներից տեղեկություններ հայթայթելու և դրանք թարգմանելու միջոցով:

10-րդ դասարան (ընդհանուր դասընթացի համար շաբաթական ժամաքանակը՝ 4, ընտրությամբ դասընթացին՝ 6)

Լեզվական նյութը

Բառապաշար: Առաջարկվող թեմաների շրջանակներում ունենալ մոտ 1300 բառային միավորների վերարտադրողական բառապաշար:

Բառակազմություն: Ածանցում – վերջածանցներ, նախածանցներ: Կարողանալ ածանցների միջոցով որոշել բառերի պատկանելիությունը տարբեր խոսքի մասերին:

Կարճաժամկետ նախագծերի համար առաջարկվող ուսումնական թեմաները

Առաջին կիսամյակ

- Անհատ և ընկերություն, խառնվածք, նորաձևություն
- Իմ դպրոցը, կրթահամալիրը, նրա ձեռքբերումները և բացթողումները
- Մասնագիտությունների ընտրություն
- Հաղորդակցություն
- Ինտերնետ և բլոգ
- Զանգվածային լրատվական միջոցներ, նորություններ, համացանցային պատմություններ

Երկրորդ կիսամյակ

- Սպորտ և մարզական խաղեր, առողջ ապրելակերպ
- Շրջակա միջավայրը և նրա պահպանումը
- Հայաստանի ներկան, անցյալը և ապագան
- Մշակույթ, ավանդույթներ, սովորույթներ
- Անգլերենը՝ որպես միջազգային լեզու
- Երիտասարդներ և մեծահասակներ
- Միջազգային կապեր

Քերականություն (Grammar)

Ձևաբանություն: Հոդ. որոշյալ, անորոշ, հոդի բացակայություն. գործածությունը նյութ ցույց տվող անհաշվելի գոյականների հետ, վերացական գոյականների հետ, կայուն կապակցությունների հետ:

Գոյական: Թիվ, հոլով, սեռ: Գոյական + գոյական կառուցվածքները:

Դերանուն: Անձնական, ցուցական, հարցական, անորոշ, ստացական, անդրադարձ, փոխադարձ, հարաբերական:

Թվական: Քանակական, դասական, կոտորակային:

Ածական: Որակական և հարաբերական ածականներ, ածականների համեմատության աստիճանները: Համեմատական աստիճանների ուժեղացում (much more/far more interesting)

Մակբայ՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի: too, enough մակբայները և դրանցով կազմված կառուցվածքները. too + adj. (too difficult), adj/adv + enough (quick enough), enough + noun (enough offers). մակբայի կիրառման յուրահատուկ դեպքեր:

Ածական և մակբայ. կիրառման յուրահատուկ դեպքեր:

Նախդիրներ՝ ժամանակ, տեղ, ուղղություն ցույց տվող:

Բայ: Կանոնավոր և անկանոն բայեր, բայական ժամանակներ (Present Indefinite, Past Indefinite, Future Indefinite, Present Continuous, Past Continuous, Future Continuous, Present Perfect, Past Perfect, Future Perfect) սեռ, մոդալ բայեր: Բայական ժամանակներ (Present Perfect Continuous, Past Perfect Continuous): Անցողական և անանցողական բայեր: Մոդալ բայեր, մոդալ բառեր և արտահայտություններ: Բայական դարձվածքների կիրառում գրավոր և բանավոր խոսքում (verbal phrases) հետևյալ բայերի հետ. To make, to cut, to call, to bring, to come, to go, to break, to look, to set, to hand, to hold, to get, to become, to turn, to grow բայերի հետ: Բայերի խնդրառություն: Բայի անդեմ ձևեր /Infinitive, Gerund, Participle / և դրանցով կազմված կառուցվածքները:

Շարահյուսություն – նախադասություն

Բարդ համադասական և ստորադասական նախադասություններ

Շարադասություն (word order), շրջադասություն

Ենթակա + ստորոգյալ + խնդիր: Բարդ ենթակա (Complex subject): Բարդ նախդրավոր խնդիր (Complex prepositional object):

Ստորադասական նախադասություններ: Պայմանական ստորադասական նախադասությունների տիպերը (conditional sentences): Conditional I (իրական/ոճալ պայմանական նախադասություններ). If I know her telephone number I will phone her. Conditional II (անիրական/ոչ ոճալ պայմանական նախադասություններ). If I knew her telephone number I would phone her. Wish... But for... It's (high) time... As if... բառերով և բառակապակցություններով կառուցվածքները:

11-րդ դասարան (ընդհանուր դասընթացի համար շաբաթական ժամաքանակը՝ 4, ընտրությամբ դասընթացինը՝ 6)

Լեզվական նյութը

Բառապաշար, բառակազմություն: Հաղորդակցության համար անհրաժեշտ բառապաշար (1500 (1150+350) բառապաշարային միավոր):

Կարճաժամկետ նախագծերի համար առաջարկվող ուսումնական թեմաները

Առաջին Կիսամյակ

- Անհատ և հարաբերություններ: Հին և նոր ընկերներ, բարեկամներ, հարևաններ: Բնավորության գծերի նմանություններ և տարբերություններ
- Հաղորդակցություն, զանգվածային լրատվական միջոցներ: Բլոգ, ինտերնետ
- Սերունդների հակասություններ, ապագա մասնագիտության ընտրությունը

Երկրորդ կիսամյակ

- Շրջակա միջավայրը և նրա պահպանումը: Մարդկության ապագան մարդկանց ձեռքերում է
- Նորաձևություն, ցուցադրություններ, հագուստներ, դաջվածքներ

- Առողջություն և սպորտ
- Մեր ազգային և կրթահամալիրային տոները
- Հայաստանի և լեզվակիր երկրի քաղաքական համակարգերը: Նմանություններ և տարբերություններ
- Կրթություն: Հայաստանի կրթական համակարգ: Անգլախոս երկրների կրթական համակարգը

Քերականություն (Grammar)

Ձևաբանություն

Բայ (The Verb): Բայի ժամանակների, սեռի, մոդալ բայերի կրկնություն: Կրավորական սեռը (The Passive Voice) կրկնություն

Հոդ (The Article) կրկնություն

Past conditionals and Wish

Բայի անդեմ ձևեր (գերունդիումով արտահայտություններ)

Բայական դարձվածքներ

Շարահյուսություն

Նախադասություն (Բարդ համադասական և ստորադասական նախադասություններ)

Ուրիշ ուղղակի խոսքի ազատ վերարտադրում (Reported Speech)

Հարցական նախադասություններ

Պատասխան հարցեր և տրոհված հարցեր (reply questions and tag questions)

Ենթակա և ինդիք երկրորդական նախադասություններ: It seemed/proved/turned out ... that

It is necessary/strange ... that. Somebody suggests/believes ... that

Սովորողների ուսումնական գործունեության ձևերը

Անհատական աշխատանք

- Ինտերնետային կայքերից նյութերի հայթայթում տարբեր նախագծերի համար
- Մասնակցություն առցանց քննարկումներին

Հետազոտական աշխատանք.

- Տարբեր աղբյուրներից տղեկատվության որոնում
- Համեմատում, զուգադրում, վերլուծում
- Սեփական տեսակետի ձևավորում և եզրահանգումների կատարում

Գործունեություն ըստ կրթահամալիրի 2014-2015 ուսումնական տարվա օրացույցի

- Մասնակցություն հեղինակային մանկավարժության աշնանային հավաքին (թարգմանություններ, բաց դասեր, հոդվածներ)
- Միախորհրդով Սեբաստացու օրեր – նոյեմբեր 2014 (մասնակցությունը թարգմանչական աշխատանքով)
- Մասնակցություն ձմեռային և ամառային ուսումնական ճամբարներին
- Մասնակցություն հանրակրթական Digitech ստուգատեսին (անգլերեն տեսադասեր, ուսումնական նյութեր, տեսաֆիլմեր)
- Մասնակցություն թարգմանական ստուգատեսին

Գնահատման կարգը

Գնահատումը հիմնվում է սովորողի կատարած նախագծային աշխատանքի վրա՝ հաշվի առնելով հետևյալ բաղադրիչները և դրանց հատկացվող միավորները.

Ա. Թեմատիկ բառապաշարի ճիշտ գործածումը – առավելագույնը 2 միավոր

Բ. Լեզվական կառուցվածքների ճիշտ գործածումը – առավելագույնը 2 միավոր

Գ. Վերջնական արդյունքի (հոդված, Power point ծրագրով ներկայացում, տեքստով տեսանյութ) բովանդակության և նախագծի նպատակի համապատասխանությունը – առավելագույնը 3 միավոր

Ստացած առավելագույն 7 միավորին սովորողը հնարավորություն ունի ավելացնելու ևս 3 միավոր՝

- ինքնուրույն կատարած թարգմանություններով և հետազոտական աշխատանքներով – 1 միավոր,
- ուսումնական ճամփորդություններով – 1 միավոր,
- ստուգատեսներին և օլիմպիադաներին մասնակցելով -1միավոր,

Անգլերենի առարկայական նախագծերին ներկայացվող պահանջները

2014-2015 ուստարում 10-11-րդ դասարաններում անգլերենի առարկայական նախագծերն արվում են առարկայական ծրագրի մեջ նշված ուսումնական թեմաներին համապատասխան:

Յուրաքանչյուր սովորող նախագիծը կատարում է լեզվական կարողությունների իր սահմաններում: Նախագիծը կատարված է համարվում, եթե սովորողը իր բլոգի «Անգլերեն» բաժնում արդեն ունի հետևյալ հրապարակումը.

1.Նախագծի անունը

2.Տվյալ թեմայով համացանցից ընտրված մի որևէ նյութ և սովորողի կարծիքը այդ նյութի վերաբերյալ (նյութն ընտրվում է մի քանի նմանատիպ նյութեր կարդալուց, դրանք թարգմանելուց հետո, իսկ կարծիքը պետք է լինի ինքնուրույն գրված):

3.Սովորողի ինքնուրույն գրած տեքստը տվյալ թեմայի վերաբերյալ (հավանական գրագողությունը ստուգվում է հատուկ ծրագրի

միջոցով [http://www.grammarly.com/?q=plagiarism&utm_source=google&utm_medium=cpc&utm_campaign=Search%20\\$.10%20-%20\\$.20%20CPC%20-%20Good%20&%20Fair&utm_](http://www.grammarly.com/?q=plagiarism&utm_source=google&utm_medium=cpc&utm_campaign=Search%20$.10%20-%20$.20%20CPC%20-%20Good%20&%20Fair&utm_)):

4.Թեմատիկ բառապաշար – thematic vocabulary (բառապաշարում տրվում են թեմային վերաբերող որքան հնարավոր է շատ անգլերեն բառեր և բառակապակցություններ իրենց հայերեն թարգմանություններով):

12-րդ դասարան

Լեզվական նյութը

Դասընթացը հաջողությամբ ավարտած 12-րդ դասարանի սովորողները ունենում են անգլերենի բավարար գիտելիքներ և լեզվական կարողություններ՝ անգլերենի Պետական ավարտական (ընդհանուր դասընթաց՝ շաբաթական 2 ժամով) և միասնական (ընտրությամբ դասընթաց՝ շաբաթական 6 ժամով) գրավոր քննությունը հաջողությամբ հանձնելու համար:

Դասընթացի բովանդակությունը և սովորողների գիտելիքներն ու կարողությունները ըստ լեզվական նյութի

- Բառապաշարը
Վերարտադրողական բառապաշարը – մոտ 1500 բառ
Վերարտադրողական, ակտիվ բառապաշարի մեջ, բացի կենցաղային առօրյա օգտագործման բառերից, անպայմանորեն ընդգրկվում են բոլոր շաղկապները, կապակցող բառերն ու բառակապակցությունները: Շաղկապների և կապակցող բառերի ցանկը կարելի է գտնել այստեղ <http://dpir.mskh.am/art.php?id=80>.
Ճանաչողական, պասսիվ բառապաշարը- մոտ 2000
- Բառակազմություն
Միասնական թեստերում կարևորություն է տրվում բառակազմությանը՝ նախածանցների և վերջածանցների իմացությանը: Եթե նույնիսկ բառն անծանոթ է, սովորողը նախածանցներից և վերջածանցներից պետք է գուշակի, թե որ խոսքի մասին է պատկանում տվյալ բառը, որպեսզի բազմընտրական առաջադրանքներում ճիշտ ընտրություն կատարի:
Սովորողը պետք է ճանաչի և կարողանա գործածել հետևյալ նախածանցները – ժխտական նախածանցներ-in, ir, il, dis, un
Գործողությունը նորից անելու իմաստ տվող – re
Գործողությունը սխալ անելու իմաստ տվող – mis
Ածականին և գոյականին բայ դարձնող – en
«Թերի» իմաստն արտահայտող – under
«Գեր» իմաստն արտահայտող – over
«Նախ» իմաստն արտահայտող – pre
«Ետ» իմաստն արտահայտող – post
«Նախկին» իմաստն արտահայտող – ex
Սովորողը պետք է ճանաչի և գործածի հետևյալ վերջածանցները.
Գոյականակերտ վերջածանցներ – er և or, որոնք ցույց են տալիս գործողությունը կատարող անձին
Գործողությունը կատարողի մասնագիտությունը նշող – ist
Ազգային պատկանելիությունը, լեզուն կամ մասնագիտությունը նշող – ian
Ee – ցույց է տալիս այն անձին, ում հանգում է գործողությունը
Բայից վերացական գոյական ստեղծող – age և al
Ance և ence, որոնք համապատասխանաբար ant և ent վերջածանց ունեցող ածականներից ստեղծում են գոյականներ
Ածականից գոյական ստեղծող – dom, ness, th, ity, ability, ibility
Բայից գոյական ստեղծող –ment, ation, tion, sion, ssion
Գոյականից վերացական գոյական ստեղծող – ship, hood
Բայից գոյական ստեղծող – ture, sure, ssure, zure
Ածականակերտ վերջածանցներ
Բայից ածական ստեղծող – able, ible, ant, ent
«ական» իմաստն ունեցող – ary, ory
Գոյականից ածական ստեղծող – ful, less, ous, y
«ավուն» իմաստն ունեցող – ish
Բայաստեղծ վերջածանցներ
Գոյականից բայ ստեղծող – ate, ute
Ածականից և գոյականից բայ ստեղծող – en, fy, ify
Գոյականից բայ ստեղծող – ize, ise

Մակբայակերտ վերջածանցներ
Ածականից ձևի մակբայ ստեղծող – ly
Գործողության ուղղություն ցույց տվող – ward, wards

- **Ձևաբանություն**

Սովորողը պետք է իմանա և կարողանա գործածել.
անորոշ և որոշյալ հոդերի բոլոր կիրառությունները. հոդի բացակայությունը նյութ ցույց տվող անհաշվելի գոյականների հետ, հոդերի կիրառումը վերացական գոյականների հետ, հոդի բացակայությունը և «some» անորոշ դերբայի կիրառումը, հոդերի կիրառումը հատուկ անուն գոյականների հետ, հոդերի կիրառումը աշխարհագրական անունների հետ, անորոշ հոդի կիրառումը կայուն կապակցություններում, որոշյալ հոդի կիրառումը կայուն կապակցություններում, հոդի բացակայությունը կայուն կապակցություններում, որոշյալ հոդի կիրառումը, երբ հարկ է լինում նշել կենդանու տեսակը – The tiger is a powerful beast. ,» go to university» և «go to the university» կիրառումները, որոշյալ հոդի կիրառումը ածականի գերադրական աստիճանի հետ և դրա բացակայությունը մակբայի գերադրական աստիճանի հետ, որոշյալ հոդի կիրառումը «the ... the» համեմատական կառուցվածքում, որոշ ածականների հետ որոշյալ հոդի կիրառումը հավաքական գոյականի իմաստ ստանալու համար –the rich, the poor, որոշյալ հոդի կիրառումը նավերի, հյուրանոցների, թերթերի և ամսագրերի անունների հետ, անորոշ հոդի բացակայությունը որոշ գոյականների հետ-advice, weather, information, progress..., որոշյալ հոդի կիրառումը և դրա բացակայությունը կազմակերպությունների և ձեռնարկությունների անվանումների հետ, որոշյալ հոդի կիրառումը դասական թվականների հետ, «the tenth gate» և «Gate 10» կիրառումները, «a two-week holiday» և «two weeks' holiday» կիրառումները, «hair, room, paper, noise» գոյականների կիրառումը անորոշ հոդով և առանց հոդի, անորոշ հոդի կիրառումը և դրա բացակայությունը բացականչական նախադասություններում:

- **Գոյական**

Սովորողը պետք է ճանաչի ու իմանա հաշվելի և անհաշվելի, նյութ ցույց տվող և վերացական գոյականները:

Սովորողը պետք է իմանա գոյականների հոգնակի թվի կազմումը, բարդ գոյականների հոգնակի թվի կազմումը:

Սովորողը պետք է իմանա, որ կան գոյականներ, որոնք.

Անկանոն ձևով են կազմում իրենց հոգնակի թիվը (foot-feet, woman-women,...)

Միշտ հոգնակի թիվ են արտահայտում առանց –s վերջավորության (people, police, cattle, poultry,)

Միշտ գործածվում են եզակի թվով (furniture, news, accommodation, advice, bread, information, luggage...)

Ունեն –s վերջավորությունը, բայց եզակի թիվ են արտահայտում (mathematics, physics, phonetics, politics ...)

Հավաքական են և ունեն եզակի թվով կիրառում, ինչպես նաև հոգնակի թվով կիրառում առանց –s վերջավորության

Առանց –s վերջավորության չեն գործածվում և միշտ հոգնակի թվում են (trousers, binoculars, pincers ...)

Առանց –s վերջավորության հոգնակի թիվ են արտահայտում, եթե նրանց նախորդում են թվականներ (dozen, pair, couple-օրինակ` three pair of shoes)

Ունեն նույն ձևը և եզակի, և հոգնակի կիրառություններում (sheep, deer, fish)

Նյութ ցույց տվող են, բայց երբեմն գործածվում են հոգնակի թվով՝ նախադասության մեջ այդ նյութի շատությունը տարբեր տեսակները շեշտելու համար (The snows of Kilimanjaro..., The waters of the Volga...), (There are 300 sorts of cheeses here. Different mineral waters are produced in Armenia)

Ունեն հոգնակի թվի երկակի ձևեր տարբեր նշանակություններով (penny-pence և pennies, cloth –cloths և clothes, brother- brethren և brothers)

Սովորողը պետք է ճանաչի և կարողանա կազմել հասարակ և բարդ գոյականների ստացական հոլովը, ինչպես նաև իմանա գոյականի ստացական հոլովի և «of phrase»-ի գործածման դեպքերը, «a friend of my brother's» ձևը:

Սովորողը պետք է ճանաչի, հասկանա և կարողանա գործածել ածականացված գոյականներ, երբ մի գոյականը մյուսի համար որիշիշի դեր է կատարում (school garden, railway station, table cloth...):

• Ածական

Սովորողը պետք է ճանաչի և կարողանա գործածել որակական ածականների համեմատության աստիճանները,

• many, much, good, bad, little, far, late, old, near ածականների համեմատության աստիճանները

• ածականների համեմատական աստիճանի ուժեղացման դեպքերը

• «most» բառի գործածումը անորոշ հոլով և առանց դրա, երբ այն ունի «ծայրահեղ» և «մեծ մասը, մեծամասնությունը» իմաստները

• Ածականների համեմատական կառուցվածքները

• Ածականների շարադասությունը նախադասության մեջ

• «interesting-interested, exciting-excited, ...» տիպի բառազույգերը

• «so, such, enough, too» մակբայների գործածումը ածականների հետ

• Ածական + one/ones կառույցը (Which do you want? –The blue ones.)

• «It +to be+adjective+infinitive» կառույցը (It is difficult to find an innocent man.)

• «It +to be+adjective+of you(him, them, Tom)+infinitive» կառույցը (It is kind of you to help me.)

• «It +to be+for smb+to do smth» կառույցը

• Մակբայ

Սովորողը պետք է ճանաչի և կարողանա գործածել.

Ձևի, չափի, տեղի, ժամանակի, հաճախականության, աստիճանի մակբայները

• Ածականները և մակբայները, որոնք նույն ձևն ունեն և մի ձև էլ՝ -ly

վերջավորությամբ «hard-hard-hardly, high-high-highly, wide-wide-widely, pretty-pretty-prettilly, deep-deep-deeply,...»

• Մակբայների համեմատության աստիճանները և համեմատական կառուցվածքները

• «most» բառի գործածումը, երբ այն նախորդում է ածականին՝ «very» իմաստով (He treated her most kindly.)

• «adverb+adjective և adverb+past participle» կառուցվածքները (extraordinarily beautiful, beautifully decorated)

• Մակբայների շարադասությունը նախադասության մեջ

• Որոշ մակբայներից հետո շրջուն շարադասության դեպքերը, երբ օժանդակ բայը դրվում է ենթակայից առաջ, ինչպես հարցերում է արվում. «hardly ever, in no circumstances, never, no sooner...than, hardly...when, not only, nowhere, on no account, only by, only in this way, only then, scarcely...when, seldom» (On no account should you agree with him. Only by working hard will you be able to pass your exam.)

- **Դերանուն**
Մովորողը պետք է ճանաչի և կարողանա գործածել բոլոր տեսակի դերանունները Անձնական(I, you,...), խնդիր հոլով անձնական դերանունները(me, you, him...), ստացական դերանունները(my, your...), ստացական դերանունների բացարձակ ձևերը(mine, yours,...), անդրադարձ և շեշտող (myself, yourself...), փոխադարձ (each other, one another), ցուցական (this, that...), հարցական (who, what...), հարաբերական (who, which, ...), անորոշ (all, each, every, both, neither, either, some, any, no, none)
- **Բայ**
Մովորողը պետք է պատկերացում ունենա, ճանաչի և խոսքում գործածի բայի դիմավոր ձևերը
 - օժանդակ, կապակցող և իմաստավոր բայերը
 - բայի սահմանական եղանակի բոլոր ժամանակները ներգործական և կրավորական սեռում գործածության իրենց բոլոր դեպքերով ու համապատասխան ուղեկցող բառերով, 4 տիպի հարցական, ինչպես նաև ժխտական ձևերով
 - բայական ժամանակների հաջորդականությունը (համաձայնեցումը)
 - բայի ներգործական սեռով նախադասության փոխակերպումը կրավորականի և հակառակը
 - Բայի հրամայական եղանակը, let-ով սկսվող նախադասությունները, շեշտող հրամայական նախադասությունները օժանդակ բայի գործածմամբ (Do come with me!), հրամայական նախադասության անջատական հարցը «will you?»-ով
 - Ստորադասական եղանակը (Subjunctive 1-Present Subjunctive and Past Subjunctive և Subjunctive 2)
 - «Can, may, must» մոդալ բայերն իրենց բոլոր իմաստներով և գործածության դեպքերով և « be able to, have to, be allowed to» համարժեքներով, ինչպես նաև «modal verb + perfect» ձևերն իրենց իմաստներով
 - Shall, should, ought to, needn't, daren't, to be to մոդալ նշանակության բայերը
- **Բայի անդեմ ձևերը.**
Մովորողը պետք է կարողանա ճանաչել և գործածել Անորոշ դերբայը (Infinitive) «to» մասնիկով և առանց դրա, անորոշ դերբայի ներգործական և կրավորական ձևերը (to read-to be read), «Indefinite» և «Perfect» ձևերը (to go – to have gone),
 - ցանկություն, հարկադրանք, զգացում, ենթադրություն արտահայտող բառախմբերը, որոնցից հետո հնարավոր է կազմել բարդ խնդիր-Complex Object (I want you to help me.)
 - «To say, to state, to report, to announce, to suppose, to think, to believe, to expect, to know, to consider» բայերի կրավորական սեռով սկսվող և անորոշ դերբային նախորդող կառուցվածքները (Mr Hakobyan is reported to have left for Iran.)
 - Անորոշ դերբայը «seem, prove, happen, chance» բայերից հետո (He seems to agree with us. She appeared to be right.)
 - Անորոշ դերբայը առանց «to» մասնիկի «would rather» և «had better» բառերից հետո
 - Անորոշ դերբայը «likely, unlikely, certain, sure» ածականներից հետո (They are sure to arrive soon.)
 - Գերունդին (Gerund) անկախ որևէ բայից կամ նախդիրից (Reading is my favourite occupation), Գերունդին «on, without, by, after, before» նախդիրների հետ, որոշակի բայերից հետո առանց նախդիրների և նախդիրների հետ

- Բայերի այն ցուցակը, որոնցից հետո գերունդի է օգտագործվում և բայերի այն ցուցակը, որոնցից հետո միշտ անորոշ դերբայ է օգտագործվում
 - Որոշ բայերից հետո կամ գերունդի, կամ անորոշ դերբայ (remember, forget, regret, try, begin, start, go on, stop)
 - Դերբայը (Participle) իր կազմության ձևերով և կիրառման բոլոր դեպքերով
 - Դերբայական դարձվածով կազմված պարզ ընդարձակ նախադասությունները փոխակերպել պարզ բայական ստորոգյալով բարդ ստորադասական նախադասությունների (Not knowing him very well I couldn't turn to him for help. As I didn't know him very well, I couldn't turn to him for help.)
- Նախդիր

Սովորողը պետք է իմանա և կարողանա գործածել անգլերենի հասարակ (in, on, under, at, beside,...) , բարդ (into, upon, onto,...) և բաղադրյալ (in front of, at the back of, instead of,) նախդիրները

 - անկախ գործածվող նախդիրները (The sparrow is on the branch) և բառերը, որոնք իրենցից հետո պահանջում են այս կամ այն նախդիրը (I insist on your joining our group.)
 - «to make, to take, to look, to get, to come, to go, to fall, to break, ...» բայերով կազմված առավել հաճախ հանդիպող բայական դարձվածքները և դրանց թարգմանությունները հայերեն
- Շաղկապ

Սովորողը պետք է ճանաչի և կարողանա գործածել Համադասական շաղկապները (and, as well as, both ...and, but, either...or, neither...nor, not only...but also, or, whereas, while)

Սովորողը պետք է ճանաչի և կարողանա գործածել հետևյալ ստորադասական շաղկապները.

 - Ենթակա և խնդիր երկրորդական նախադասությունների (that, if, whether)
 - Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների (after, when, as, as soon as, hardly...when, no sooner...than, since, until, till)
 - Պատճառի պարագա երկրորդական նախ-ների (because, as, for, now that, since, on the ground that,)
 - Պայմանի պարագա երկրորդական նախ-ներ (if, in case, on condition that, provided կամ provided that, providing կամ providing that, as long as կամ so long as, unless,)
 - Նպատակի պարագա երկրորդական նախ-ներ (so that, in order that, lest,)
 - Չնի պարագա երկրորդական նախ-ներ (as, as if, as though, so...that, such...that)
 - Զիջողական պարագա երկրորդական նախադասություններ (though կամ although, in spite of the fact that, notwithstanding that)• «Whose, who, whom, where, which, how, why, what» հարաբերական դերանունները նույնպես շաղկապների դեր են կատարում
- Շարահյուսություն

Սովորողից չի պահանջվում նախադասության վերլուծություն անել և որոշել, թե որն է նախադասության ենթական կամ ստորոգյալը, ինչ տիպի են դրանք և ինչ խոսքի մասերով են նրանք արտահայտված, բայց սովորողի համար շատ կարևոր կարողություն է համարվում նախադասության մեջ ենթակայի և ստորոգյալի համաձայնեցումը դեմքով և թվով:

Սովորողը պետք է կարողանա ստորոգյալը համաձայնեցնել ենթակայի հետ դեմքով և թվով եթե.

Ենթական հավաքական գոյական է

- Ենթական արտահայտված է «news, advice, information, luggage, phonetics, linguistics, ...» և այդ շարքի այլ բառերով
- Ենթական արտահայտված է «everybody» անորոշ դերանունով և պետք է որոշել անջատական հարցի վերջնամասը
- Պետք է թարգմանել «խնձորը լավ է առողջության համար» կամ «Կարտոֆիլը պահասենյակում է» և նման կարգի այլ նախադասություններ
- «all» բառով ենթական անձ է նշում, և երբ այն առարկա է նշում
- Ենթական արտահայտված է երկու բառով և նրանց կապում է «and» շաղկապը
- Ենթական արտահայտված է երկու բառով և նրանց կապում է «with» նախդիրը
- Ենթական արտահայտված է երկու բառով և նրանք կապված են «either...or»-ով կամ «neither..nor»-ով
- Գործ ունենք «a number of...» և «the number of ...» կապակցությունների հետ
- Ենթական երկրի, գրքի, ֆիլմի կամ որևէ այլ ստեղծագործության անուն է՝ արտահայտված հոգնակի թվով գոյականով
- Ենթական արտահայտված է մի քանի անորոշ դերբայներով
- Ենթական երկու բառերով է արտահայտված և նրանց կապում է «as well as»-ը
- Ենթական երկու իրար շատ սերտ բառերից է կազմված, օրինակ՝ «thread and needle»

Շարահյուսական առաջադրանքներում մեծ կարևորություն է տրվում նաև, թե ինչ շարունակություն է ընտրվում այս կամ այն կապակցող բառից հետո.

նախադասության առաջին մասից հետո ընտրենք տրամաբանակա՞ն

շարունակության միտք, թե՛ նրան հակասողը, շարունակությունը ընտրենք ժխտվա՞ծ տարբերակովը, թե չժխտվածը, շարունակության մասը ենթակայով և ստորոգյալով նախադասությու՞ն է լինելու, թե իմաստային բառախումբ:

Սովորողը պետք է իմանա և կարողանա ճիշտ գործածել տրամաբանական շարունակություն պահանջող հետևյալ շաղկապները կամ կապակցող բառերը. «and, because, for, as, since, therefore, consequently, moreover, hence, accordingly»:

Սովորողը պետք է իմանա և կարողանա ճիշտ գործածել տրամաբանական շարունակությանը հակասող միտք պահանջող հետևյալ շաղկապներն ու կապակցող բառերը. «though, although, whereas, while, however, yet, still, notwithstanding, but, contrary to, despite, in spite of the fact that»:

Սովորողը պետք է իմանա և կարողանա ճիշտ գործածել իրենցից հետո նախադասություն պահանջող հետևյալ շաղկապները. «although-չնայած, so that- որպեսզի, in order that-որպեսզի, because-որովհետև, in spite of the fact that-չնայած որ»:

Սովորողը պետք է իմանա և կարողանա ճիշտ գործածել իրենցից հետո նախադասություն չպահանջող շաղկապներն ու կապակցող բառերը. «despite- չնայած, in spite of-չնայած, because of-պատճառով, so as to-որպեսզի, in order to- որպեսզի»:

Սովորողը պետք է կարողանա կատարել փոխակերպման հետևյալ առաջադրանքները.

- Ուրիշի ուղղակի խոսքի վերածումը անուղղակիի և հակառակը՝ պահպանելով բայական ժամանակաձևերի հաջորդականության կանոնները, երբ ուղղակի խոսքը պատմողական է, կամ՝ հարցական, արտահայտում է խնդրանք, կամ՝ հրաման

- Ներգործական սեռի նախադասության վերածումը կրավորականի և հակառակը

Սովորողը պետք է իմանա և կարողանա գործածել պայմանական նախադասությունների երեք տիպերը:

Ընթերցելով հասկանալու կարողության պահանջները այս դասընթացի

շրջանակներում

Ավարտելով դասընթացը սովորողը պետք է կարողանա.

- Պատասխանել լեզվական իրազեկության B1 մակարդակով գրված տեքստի բովանդակությանը վերաբերող հարցերին առանց բառարանի
- Համադրել տեքստի մեջ գործածված բայական դարձվածքները, առանձին բառերը նրանց հոմանիշային արտահայտությունների, բայական դարձվածքների և առանձին բառերի հետ, որոնք տրված են առաջարկվող բազմընտրական հարցերում
- Գուշակել, թե ինչպիսին կլինեն տվյալ տեքստի շարունակությունը

Գնահատման համակարգը

Դասընթացն ավարտելուց հետո սովորողի լեզվական գիտելիքները և կարողությունները գնահատվում են ըստ ՀՀ ԿԳ նախարարության ԳԹԿ-ի առաջարկած Պետական ավարտական և միասնական անգլերենի գրավոր քննությունների թեստերի նմուշների՝ 20 բալային համակարգով:

Ընթացիկ ստուգումները կազմակերպվում են յուրաքանչյուր ամսվա վերջին ըստ արդեն յուրացված լեզվական նյութի՝ 10 բալային համակարգով: